Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 30-ի N 889- Ա
որոշման

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
«ՕՐՐԱՆ-Վանաձոր» օգնություն Հայաստանի և Արցախի կարիքավոր ընտանիքներին

2021թ.

1	2	3
1.	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատ ընտանիքներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը:
3.	Բարեգործը (բարեգործները)	Միավորված ազգերի կազմակերպության Հայաստանյան գրասենյակ (ՄԱԿ), ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, Հովհաննիսյանների ընտանիք, Գրիգորյան բարեգործական հիմնադրամ (Անգլիա), Սերժ Թանկյան (ԱՄՆ) , Ակիյան ընտանիք
4.	Ծրագրի կատարողը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն ՀՎՀՀ՝ 02552842 Հասցե՝ Առաջին Եկմալյան 6 Երևան, Հայաստանի Հանրապետություն Հեռ.՝ 53-51-67
5.	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ Վանաձոր Սոցիալական բնագավառ

1	2	3
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 82,714,739 (ութսուներկու միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	• 6-16 տարեկան 130 երեխա, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում: Մի շարք երեխաներ աշխատում և մուրում են փողոցում: Երեխաների մեծ մասը միակողմանի ծնողազուրկ են, հաշմանդամ, բաժանված կամ ազատազրկված ծնողներ ունեն: • 30 թոշակառուներ՝ 60 և ավելի բարձր տարիքի կանայք ու տղամարդիկ, ովքեր անտուն են և մուրում են փողոցում, միայնակ են, ամուսնացած են և անժառանգ, I, II, III խմբերի հաշմանդամ են, ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն: • 2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախում տեղի ունեցած պատերազմի հետևանքով իրենց կացարանը կորցրած և Հայաստանի Հանրապետությունում ստիպված բնակություն հաստատած ընտանիքների երեխաներ: Շահառուների ընտրությունը կատարում է սոցիալական աշխատողը՝ նախապես մշակված չափանիշներով: Յուրաքանչյուր դեպք քննարկվում է «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության մասնագիտական խմբում, որի մեջ մտնում են «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության սոցիալական աշխատողը, մանկավարժները, հոգեբանը, բժիշկը և գործադիր տնօրենը: Շահառուների ընտրության հարցում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական բաժնի, սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության հետ:
1	2	3

		Արցախից ժամանած երեխաներին տրամադրվող աջակցության վերաբերյալ հայտարարություն է տարածվում սոցիալական մեդիայի էջերում (Facebook, Instagram) և լրատվական կայքերում (hraparak.am, asekose.am, armenpress.am, aravot.am, nt.am), ինչպես նաև Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սույն ծրագիրը նախատեսված է 2021 թ. հունվարի 1-ից մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար և այն շարունակական է: Այն կգործի այնքան ժամանակ, որքան կազմակերպությունը հնարավորություն կունենա իրագործելու իր առաքելությունը և այդ նպատակով կունենա ֆինանսական միջոցներ:
9.	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունը Վանաձորի Տիգրան Մեծ 4ա հասցեում գտնվող կենտրոնում մուրացիկ, թափառաշրջիկ և ծայրահեղ կարիքավոր ընտանիքների 130 երեխայի շաբաթը 6 օր մատուցում է տաք ճաշ և իրականացնում սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական և բժշկական ծառայություն: Հայաստանի Հանրապետությունում Covid-19 համավարակի տարածման պատճառով հայտարարված կարանտինով պայմանավորված՝ նախքան ՀՀ կառավարության կողմից գործունեության վերսկսման թույլտվություն ստանալը, «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության բոլոր շահառուները կստանան առաջին անհրաժեշտության սննդամթերքով լի փաթեթներ: Դասապատրաստման հարցում աջակցությունը կկազմակերպվի հեռավար եղանակով: Համավարակով պայմանավորված իրավիճակի բարելավման և ՀՀ կառավարության կողմից գործունեության վերսկսման թույլտվություն ստանալուն պես «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունը կվերսկսի իր բնականոն աշխատանքը՝ համաձայն մեր հաստատված ծրագրի: • **Սննդի ծրագիր*** Շաբաթը 6 օր «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունը տաք նախաճաշ է մատուցում 30 միայնակ, կարիքավոր ծերերի և հաշմանդամների:
1	2	3

		130 երեխայի և 30 թոշակառուի՝ ամենօրյա սնունդ, նաև՝ խոհանոցային սարքավորումներ և պարագաներ, տարեկան կազմում է 41,000,000 դրամ (մթերքի ձեռքբերում՝ 32,000,000 դրամ, խոհանոցային սարքավորումներ և պարագաներ՝ 2,000,000 դրամ, վարձատրություն խոհանոցի աշխատողներին (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի) 2,000,000 դրամ), Արցախից ժամանած երեխաներին տրամադրվող 80 ամսական սննդամթերքով լի փաթեթներ 5,000,000 դրամ: • **Առաջնային բժշկական և հոգեբանական աջակցություն** առաջին անհրաժեշտական բժշկական և հոգեբանական ծառայություններ՝ տարեկան 1,000,000 դրամ (բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերում՝ 300,000 դրամ, բուժքրոջ վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 700,000 դրամ): • **Սոցիալական աջակցություն*** Սոցիալական ծառայություն, հագուստ և կոշիկ՝ տարեկան 6,200,000 դրամ (ձմեռային կոշիկի և հագուստի ձեռք բերում՝ 5,000,000 դրամ, սոցաշխատողի վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 1,200,000 դրամ): • **Մշակութային ծրագրեր** Մշակութային միջոցառումներ՝ տարեկան 3,000,000 դրամ (մշակութային աշխատողների վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 1,000,000 դրամ, մշակութային միջոցառումներ՝ թատրոն, կինո,պիկնկ՝ 2,000,000 դրամ): • **Ակադեմիական ծրագրեր** Դպրոցահասակ երեխաների տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո. շաբաթական 6 օր 130 երեխայի համար, գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ապահովում, տարեկան՝ 8,000,000 դրամ (գրենական պիտույքների, ուսումնական նյութերի, պայուսակների ձեռքբերում՝ 1,200,000 դրամ, վարձատրություն ուսուցիչներին (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 4,000,000 դրամ), ձեռարվեստի խմբակներ՝ մաքրամե, փայտամշակում, կավագործություն՝ տարեկան 2,800,000 դրամ (նյութեր՝ ձեռարվեստական կենտրոնի համար՝ 800,000 դրամ, վարձատրություն ուսուցիչներն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի՝ 2,000,000 դրամ):
1	2	3
		• **Իրային աջակցություն արտասահմանից**

		Օտարերկրյա պետություններից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկված նվերներ, գրենական պիտույքներ, խաղալիք), տարեկան՝ 2,000,000 դրամ: • **Նվիրատվություն**. Ծայրաստիճան կարիքավոր 11 ընտանիքի էլեկտրաէներգիայի, գազի, բնակարանի վարձի վճարում համար, տարեկան՝ 6,300,000 դրամ, - 130 երեխայի և 30 թոշակառուի ամենօրյա երթևեկության ծախսեր, տարեկան՝ 6,240,000 դրամ: Ընդամենը 73,740,000 (յոթանասուներեք միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: * Սննդի փաթեթների, կոշիկների, հագուստի բաշխումն իրականացվում է Covid-19 համավարակի կանխարգելմանն ուղղված՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված հակահամաճարակային կանոնների խստիվ պահանմամբ: Կազմակերպչական ծախսերը՝ 8,974,739 դրամ, ընդամենը ծրագրի բյուջեն՝ 82,714,739 դրամ:
10.	Ձեռքբերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է 1. Գազի մատակարարում - 3,200,000 ՀՀ դրամ 2. Խմելու ջրի մատակարարում - 200,000 ՀՀ դրամ 3. Էլեկտրաէներգիայի մատակարարում - 1,700,000 ՀՀ դրամ 4. Հեռախոսային կապի մատակարարում - 600,000 ՀՀ դրամ 5. Սննդամթերքի ձեռքբերում - 37,000,000 ՀՀդրամ 6. Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերում - 106,555 ՀՀ դրամ 7. Գազի կաթսային տեխնիկական զննման ծառայության ձեռքբերում - 68,184 ՀՀ դրամ 8. Բենզինի ձեռքբերում - 200,000 ՀՀ դրամ 9. Կոշիկի, հագուստի ձեռքբերում - 5,000,000 ՀՀ դրամ 10. Գրենական պիտույքների, դպրոցական պայուսակների ձեռքբերում - 1,200,000 ՀՀ դրամ 11. Ձեռարվեստական կենտրոնների համար նյութերի ձեռքբերում - 800,000 ՀՀ դրամ
1	2	3
		12. Գրասենյակային ծախսեր - 400,000 ՀՀ դրամ

		13. Խոհանոցային սարքավորումների, պարագաների և նյութեր ձեռքբերում - 2,000,000 ՀՀ դրամ 14. Բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերում -300,000 ՀՀ դրամ 15. Երեխաների հանգիստ և մշակութային միջոցառումներ, նյութերի ձեռքբերում (թատրոն,կինո,պիկնիկ) - 2,000,000 ՀՀ դրամ 16. Օտարերկրյա պետություններից բեռների ներմուծում (բարերարների կողմից ուղարկվող նվերներ) - 2,000,000 ՀՀ դրամ Ընդամենը - 56,774,739 ՀՀ դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր	• ջուր՝ 200,000 դրամ • էլեկտրաէներգիա՝ 1,700,000 դրամ • հեռախոս, ինտերնետ՝ 600,000 դրամ • գազ՝ 3,200,000 դրամ • գրասենյակային ծախսեր՝ 400,000 դրամ • բենզին՝ 200,000 դրամ • գազի սարքավորումների տեխնիկական սպասարկում՝ 106,555 դրամ • Գազի կաթսայի տեխնիկական զննում՝ 68,184 դրամ • Աշխատավարձ վարչական աշխատողներին (ադմինիստրատոր,)՝ 2,500,000 դրամ Ընդամենը՝ 8,974,739 (ութ միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ	1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2. ՀՀ առողջապահության նախարարություն 3. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի սոցիալական վարչություն
1	2	3

		4. Տեղական ու միջազգային ՀԿ-ներ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ 5. ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչություն «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունը համագործակցում է նաև սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	• ՀՀ կառավարություն 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի՝ 25 կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին: • Ամսական և եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվություններ են ներկայացվում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրենների խորհրդին: • Գույքագրումը և բաշխումն իրականացվում են «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով: • Ամսեկան հաշվետվություններ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին: • Ֆինանսական աուդիտն իրականացվում է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ